13. ՋԱՄՈՒՇԱՆ

Կէղի, չէղի յոթ ախպեր կէղի։ Էդ յոթն ախպեր ա գելնին ուրանց համար նեճիր կէրթան։ Էդ յոթ լէ կարքուկ կէղին։ Էդ վեցի կնիկ էնպե՞ս սիրուն կէղին, էնպե՞ս սիրուն։ Էդ պզտիկ ախպոր կնիկ լէ շատ ավարա քյասատ կէզի։

Պզտիկ տղեն կեսա.— Ա՛յ կնիկ, ի՞նչ ծեռ տվեր ա քըվիկ, էսպես էղեր իս։ Ինչի՞ իմ վեց ախպոր կնկտիք էսպես խորոտկցած ին, էսպես կլավցած ին, ինչի՞ դու էտմլա էղեր իս, քեշրցիր իս, անոթի չմնաս, ծարավ չմնաս, ինչի՞ էտմլա էղեր իս։

Կեսա.— Իրիկ ջան, օր ես քըզի լսեցի, պտի դու ավատաս ընձի, օր մի քու նեճիրից ետ դարձի, դիմանաս։

Պզտիկ ախպեր էլավ գնաց նեճիր վեց ախպոր հետ, ըսեց.

— Ախպրտիք, էսօր ես հիվանդ իմ։

Ախպրտիք լէ ըսին.— Օր հիվանդ իս, տուն գնա։

Ախպեր լէ ճամբուց ետ դարձավ, էկավ տուն, աչքեց, ի՞նչ աչքեց, տեսավ օր, հանդե վեց ախպոր կնկտիք ամեկ ուրուն դոստ մե բռնած, քեֆ կէնին, ուր կնիկ լէ առե ավել մե ուր ծեռ, ավլա, չավլա՝ էդոնց օտներու ժըխեր չիստկի։

Կեսա.— Ապա՛, կնիկ ջան, դու իդրա համար էմլա քյասաեր իս, խեղճ էղեր իս։

Էդ տղեն ա, չխոսցավ, սիրականներուն ծեն էնեց, փախավ էլավ դուս։ Էլավ անծու-անծեն էկավ խասավ ուր ախպրտանց։

Ախպրտիք ըսին.— Ախպեր ջան, բարով էկար, լավացա՞ր շուքը աստծու։

Կեսա.— Ախպրտիք, ծըղի պտի բան մե ըսիմ, կարելի՞ ա, չէ թը չէ։

— Կարելի ա,— կեսին,— ինչո՞ւ չէղի, ախպեր ջան, ըսա։

Կեսա.— Ախպեր ջան, ես գացի տուն, ի՞նչ գացի, ծեր վեցի կնկտիք ամեք ուրեն տոսգ մե բռնած, քեֆ լախըտի կէնին, կեր ու խում։ Բաց իմ կնիկ ուրին ավել էր առած ու կավլեր, չավլեր՝ չիստկեր էդ տախտ, էնոքի իմ կնիկ էտմլա էղեր ա։

Էդ վեց ախպերն ա կիտան փեդ ու կխասնին պզտիկ ախպեր կզարկին, էնպես կթփին, ուր տեղեն էլ չդնդա, կպատուն գետին ու կզարկին, ու կըսին. «Չէղի, չէղի իգաս տուն, իգաս գեղ, թոր գնա ուրիշ էրկիր, էն ինչղոր գացիր տուն, էն ինչղոր էս խոսքեր խոսացիր մեր կնկտոց վրեն, էս էղավ քսան տարի էդ կնկտիք մեք առեր ինք, էսպես բաներ մեք չլսեր ինք»։

Մեկ էսեց. «էս ախպեր սպանիք», մեկ կեսա՝ «Չսպանիք»։ Պզտիկ ախպեր հեվի ուրչա էնեց, էլ չսպանին, ըսեց.

— Ընձի մ'սպանեք, էլ ծեր տուն չիգամ, կէրթամ ուրիշ էրկիր, ընձի կաշիատիմ։

Էն վեց ախպերն ին, էդի թորկեցին հ'ոդի ու էկան տուն, էդի մնաց սարի գլոխ։

Էկան ուրանց կնկտոց ըսեցին, էսին, թը՝ մեր պզտիկ ախպեր էկավ մըղի էսպես էսեց, էսպես ուրանց դոստ ին բռնած։

Էդ կնկտիք լէ էնպես էրթում կուտին, էնպես էրթում կուտին. «էսպես բան մենք կէնի՞նք, հեչ մենք դոստ կբռնի՞նք»։

Էդ պզտիկ ախպերն ա, էտմլա անոթի, ծարավ կմնա էդ սարի գլոխ, կեսա. «Հե՜յ, աստված, ես ինչ էնիմ, էս տեխից, աստվա՜ծ, դու ազատ էնիս ընձի»։

Սարի դլխուց էլավ, ուշիկ-ուշիկ քելեց, զուր աստված խանչեց ու դնաց։ Գնա՜ց մե քաղքի մը մեջ մտավ։ Գնաց մե հարուստ մարթու մը մոտ էղավ մշակ, ծիու սեյիս։

Էդ վեց ախպոր կնկտիք լէ հ'իմացան օր թը ուրանց տեքր գացեր ա ֆիլան քաղաք։ Գելին ջադուքար պառավ մե կբերին, կեսին.

— Պառավ ջան, ի՞նչ տանք քըզի օր թը մեր տեքր ֆիլան քաղաքն ա, էրթաս կորցուս հ'ոնցքի, իտաս սպանիլ։

Կեսա.— Ընձի մե հարիր օսկի տվեք, էրթամ կորցում։

Կեսա.— Պառավ, քըզի կիշռանով օսկի կիտամ, օր էրթաս սպանիս։

Պառավն ա դելի ուր ծծում կխեծի, կէրթա։ Կէրթա, օձն լէ կէնա ուրին կամչի, կէրթա, կէրթա էդ քաղքի մեջ։ Կէրթա էդ աղի աղու տուն։ Կաչքի օր էդ տղի աղեն զուր տղեն թազա կարքեր ա։

Կեսա.— Հարուստ մարթ իս, քու տղեն կարքեր իս, ի՞նչ տեխ պտի նստին, ինչ տեխ նստին ու քեֆ էնին ուրանց համար։

Կեսա.— Չէ՛, պառավ, ուրանց հ՚օդեմ մի կսուքիմ, հանդե։

Կեսա.— Էթանք տեսինք, ըսա ի՞նչ տեսակ հ՚օդե մե։

Կեսա.— Էրթանք տեսինք, պառա՛վ։

Գելին կէրթան էդ հ՚օդի վրեն կաչքին։

Կեսա.— Ա՜յ հարուստ մարթ, քու տղեն լավ, քու խարս լավ, էդ մուրդալ հ՚օդի մեջ իմա՞լ նստին իդրա մեջ քեֆ էնին, վայելչութեն տեսնին։

Կեսա.— Ապա պառավ, ես իմա՞լ հ՚օդա սուքիմ։

Կեսա.— Ճամխա Շալուլ-Բլբուլի սար, անգին քար բի շարա էս հ՚օդեն, օր վառի, լուս իտա ըսա հ՚օդեն օր քու տղեն ու խարս վայելչութեն տեսին։

Կէսա.— Շալուլ-Բլբուլի սար ես ի՞նչ գիտամ ինչ տեխն ա օր ճամխիմ պերիմ։

Կեսա.— Քու սեյիս գինա ինչ տեխն ա, ըսա քու սեյիսին. ագյար կրերա անգին քար, բերա, թե չբերա՝ գլոխ զար։

Կխանչե ուր սեյիս, կառնե գիգա, կեսա.

— Սեյիս, կէրթաս Շալուլ-Բլբուլի սարից անգին քար կբերիս, բի, թե չէ՝ քու գլոխ կզարկիմ։

Ըդ սեյիսն ա կէրթա կնստի ուր ծիու մսուր ու գիլա. «Իմա՞լ էրթամ, իմա՞լ բերիմ, ես ի՞նչ գինամ ինչ տեխն ա»։ Շատ գիլտ, գիլա, ծին գելի զրուցք, աստծու խրամանքով էդ ծին կելի զրուցք, կեսա.

— Տղա,— կեսա,— իմ ջիգյար դու փոթեցիր, հ՚որի՞ գիլաս։

— Աստծու անասուն, ես չիլամ, ո՞ր իլա, ըդ հարուստ մարթ դրեր ա իմ վրեն. «էրթաս Շալուլ-Բլբուլի սարեն անգին քար բերիս»։

Ըդ ծին ա կեսա.— Դե էլի, խուրց մե տուվուտ դիր իմ հ՚առեճ։

Գելի խուրց մե առվուտ կդնե ուր ծիու[1] հ՚առեճ, ըդ ծին ա, կուշտ ուրին առվուտ կուտա, կեսա.

—Տղա, դե էլի խեծի էրթանք կիշերով։

Էդ տղեն ա գելի կիշերով ըդ ծին կքաշա դուրս, կխեծի։

Ըդ ծին ա, մե սահաթվան մեջ տզին կտանի Շալուլ-Բլբուլի սար։

---

1 Բն. ծիու չիք (Ս. Կ.)։

12—1086

— Էս լէ անգին քար, վերցու էրթանք։

Էդ տղեն ա, գելի կէրթա կհարուկի ըդ մեծ զնարներ (մեծ ժայռեր), ծին ա կեսա.

— Այ տղա՛, էդ մեծ զնարներ իմա՞լ պտի վերցուս։

Կեսա.— Ապա ի՞մալ էնիմ, ծի։

Կեսա.— Ժողվա էղա պղտիկ քարեր, մե հարիր հատ լից քու ծոց ու էրթանք։

Էդ տղեն ա, կժողվա մե հարիր հատ մի, դրլնա ուր ծոց, կխեծի ու կէրթա։ Գիգան ըդ հարուստ մարթու տուն կիջնին։

Ըդ ծին ա կեսա.— Տղա՛, տուր իդա քարեր շերգով (կարգով) շարա պատի վրեն ու արի։

Ըդ տղեն ա, կէրթա ըդ հարիր քարեր կշարա հ՚օղի պատեր, գիդա։

Ծին ա կեստ.— Տղա՛, քըզի սարֆրրազ (անհոդ) քնիր, մը վախենար։

Սարախտան ա գելին, կիշքին օր թը ի՞նչ կիշքին, ըդա քարեր իմալ սուքուկ ին, իմալ շուշարանդ, հ՚օղե մե սուքվեր ի, օր չուտիս, խմիս թըմաշա էնիս։

Էդ հարուստ մարթն ա կիշկա ուրին հ՚օդեն, կեսա. «էՀ՛, աստված, էսպես խորոտ բաներ լէ էղեր էր». կխանչե ուր սեյիս կբերա, կեսա.

— Սեյիս, քու դլխուդ, արևուդ մեռնիմ, էսպես լավ բաներ լէ էղեր էր։

Էդ շադուքար պառավն ա, էլի գիգա օդի, կաշկա օր ըդ սեյիս սախ պրծեր ա, առեր ա զանգին քար էգի։ Պառավ լէ կէնա օր թը սեյիս տա սպանա, կաշկա օր հանդե ըդ հարուստ մարթ փետով կրռնա զուր հ՚օդեն։

Կեսա.— Ա՛յ հարուստ մարթ, փետո՞վ պտի էդ շուշաբանդ հ՚օդեն բռնիս։

Կեսա.— Ըպա իմա՞լ էնիմ, պառավ։

Կեսա.— Ճամխա Շալուլ-Բլբուլի սարի գերան բերա, թալ վրեն։

Կեսա.— Աչեփ ըդ Շալուլ-Բլբուլի գերան վո՞վ պիտի բերա։

Կեսա.— Քու սեյիս կբերա, էդի գինա դեոր ա։

Կխանչա զսեյիս կբերա, կեսա.— Սեյիս, պտի էրթաս Շալուլ-Բլբուլի գերան բերիս, օր թը թալինք ըս շուշաբանդ հ՚օդի վրեն։

Ըդ սեյիսն ա գելի կէրթա ուր ծիու մսուր, էլի գիլա։ Ծին ա էլի աստծու խրամանով կելի զրուցք, կեսա.

— Այ տղա, ինչ էղեր ա քըզի էսպես գիլաս։

Կեսա.— Ի՞նչ էնիմ, դրեր ա իմ վրեն՝ «Շալուլ-Բլբուլի գերան բերե, թալիմ էդ շուշաբանդ հ՚օդի վրեն»։

Ին ա կեսա.— Տղա՛, դինաս, էտի քու ախպրտոց կնկտիք պառվուն կիշռանով օսկի տված են, որ էկեր ա ըստեխ որ թը քըզի իտա սպանել, աստված օղորմած ա, ըսկի մի վախենա,— կեսա.— Տղա, բիր ընձի կուշտ առվուտ կերցու։

Էդ ծին ա կուշտ առվուտ կուտա, կեսա.— Տղա, դե էլի դուա, քաշա դուա, խեծի։

Տղեն ա, գելի խեծի ծին ու կէրթա։

Ին ա կեսա.— Տղա, էդ Շալուլ-Բլբուլի գերան Ջինու-Մաչնու սարն ա, շատ հեռու ա։

Ին ա կառնի ղտղեն, կէրթա Ջինու-Մաչինու սար, կդրա, կեսա.

— Տղա, իչի, էս լէ Ջինու-Մաչինու գերան ա, վերցու էրթանք։

Տղեն ա էլի կէրթա կհապրոկի էն մեծ ծառեր որ թը առնի իգա։

Ին ա կեսա. —Տղա՛, վերցու էս մանդր ուռեր մե հարուր հատ մը էրթանք։

Ըդ տղեն ա, կքաշա մե հարիր հատ մանդր ուռ կկապա, կխեծին ու գիգա։ Գիգա՛ն էդ հարուստ մարթու տուն։

Ին կեսա.— Տղա, դե տար թալ վըր հ՚օդեն ու արի քնի քըզի։

Սաբախտան գելնին կաչքին, կտեսնին որ էդ ուռեր, էնպես գերան էղած է, որ մարթ հեծնա՝ օտներ չառի գետին։ Հարուստ մարթն ա, կաչկա, ի՞նչ աչկա, էնպես գերան լցուկ է հ՚ոդի որ ամեն գերան արժե հարիր օսկի։

Հարուստ մարթն ա, կխանչա զսեյիս կբերա, կասա.

— Սեյիս, քու գլխուն արևուն մեռնիմ, ես չգինենք թը դու էսպես քաջ տղա ես։

Կխանչա ուստեք որ թը ղգերներ կտրին, ղհ՚օդեն բռնին։ Ինչ ուսթա որ կբերին, իդոնց հաշաթներ (գործիքներ) չկրնան ղէդ գերներ կտրին, Շալուլ-Բլբուլի էրկթե գերններն ին։

Պառավն ա էդմլա գիգա էդ հ՚օդի հ՚առեճ կկանի։

Կեսա.— Հարուստ մարթ,— կեսա,— ըս մըռդալ ուսթեք բերեր ես, իմա՞լ պտի սուքին ըդ հ՚օդեն։

Կեսա.— Բաս իմա՞լ էնիմ, ինչ խատար ուսթա կար քոմեցի բերեցի, չբանեցին իդոնց հաշաթներ մեջ։

Կեսա.— Հարուստ մարթ, ճամխա՝ «Ուսթա Մինաս կա, առ էգո. ընդրա հաշաթներ մեջ կբանին, էնիկ որ չսուքա, ուրիշ ուսթա չկարելի ա սուքա»։

Կեսա.— Ո՞րն պտի բերա։

Կեսա.— Քու սեյխս պտի բերա, քու սեյխսից պրծի ուրիշ մարթ չի կարելի ա բերա։

Կճամխա, զսեյխս կդառնա դիգա, կեսա.— Սեյխ՛ս, պտի էրթաս ուսթա Մինաս բերիս,— կեսա,— էս քաղաքն էլ ուսթա՝ չթորկեցի օր բերեցի, մեկի հաջաթներ մըջ իդա Ջինու-Մաչինու գերննեբու չըանի, էրթաս առնիս զուսթա Մինաս իդաս, կբերիս բեր, չըբերիս՝ քու գլուխդ կղարկիմ։

Ըդ սեյխսն ա, կէրթա՝ կնստի ծիու մսուր, գիլա. ըդ ծին ա էլի աստծու խրամանքով դելի զըուցք, կեսա.

— Տղա՛, ՙփդմլա ինչի՞ գիլաս, կլալուչկիս, իմ սիրտ փռքտեցիր։

Կեսա.— էս հարուստ մարթ դրեր ա, իմ վիզ կզարկա, կեսա. «Կէրթաս ուսթա Մինաս կըբերիս բե, թը չէ՝ քու վիզ կղարկիմ»։

Կեսա.— Ըդ փղավ օխտ տարի ա օր ուսթա Մինաս մեռեր ա, քըզի կտանիմ ուսթա Մինասի գերեզմնի վրեն կդնիմ,— կեսա,— էդտեխ դու իլաս, լալուչկիս, աստված կանչիս, օր թը արդար իս. աստված պտի քու ձեն լսա, ուսթա Մինաս պտի սախնա էլի իգա։

Տղեն ա, կքաշա ծին, կհեծնա, շատ կէրթա, քիչ կէրթա, ծին կէրթա կկանի ուսթա Մինասի դերեզմնի վրեն։

Տղեն ա կիչի ծիուց, կկանի ուսթա Մինասի դերեզմնի վրեն, գիլա ու ղաստված կխանչա։ Աստծու խրամանքով զէն կտեսի օր ուսթա Մինասի գերեզման կբացվի, ուսթա Մինասի գերեզման ա բացվավ, ուսթա Մինասն ա էլավ շիտկավ, Նստավ ըսեց.

— Ա՜յ տղա՛, ի՞նչ էղեր ա քըզի, էս էղավ օխտ տարի ա օր ես մեռեր իմ, իմ ջանից ի՞նչ կուզիս։

Տղեն ա գիլա ու զինք կթալա ըդըրա ոտաց վրեն, կեսա.

—Ուսթա Մինաս, քու աստված օր թը կսիրիս, ֆլան հարուստ մարթ դրեր ա իմ վրեն իմ վիզ կզարկա, աշխրքի ինչ խոտար ուսթա օր կա, առի էդեր ա, ըդոնց հաջթներ մըջ էգ Շալուլ-Բլբուլի գերններում չըանի։ Դրեր ա իմ վրեն թը պտի էրթաս ուսթա Մինաս առնիս իգաս։

Ուսթա Մինաս ա կեսա.— Տղա՛, էս էղավ օխտ տարի իմ հաջաթներս ժանգոտեր ա, գնա հանդե յոթ ծովու կղզու վրեն իմ հաջաթներ խորուկ են,— կեսա,— գնա, աչքա, հարգե թաժա սրուկ ա, եղ բերան ա, չխո գիգամ, կսուքիմ, հարգե եղ բերան չէ, չխո նա՛ կրնամ սուքիմ, նա՛ կրնամ իգամ։

Ըդ տղեն ա գելնի կէրթա։ Կէրթա յոթ ծովու կղզու վրեն, ըդըրա հաջաթներ կդտի, կտեսի օր հանդե աստծու խրամանքով թաժա

սրուկ, եղն էլ բերան։ Կառի ու գիգա, կբերա, ուսթա Մինասի մոտ կդրա։

Ուսթա Մինասն ա կեսա.— Դե տղա՛, դու գնա, ես հ՚իգամ սուքիմ։

Ըդ տղեն ա խաթր կառի ուսթա Մինասի մոտեն հ՚իգա։ Գիգա, հարուստ մարթու մոտ գիջի։

Սաբախտան դելին օր ուսթա Մինաս էկեր ա կիշերանց սուքի ու գացե, էնպես սուքեր ա օր մարթու բերան բաց կմնա, էնպես շուշաբանդ հ՚օդե մի սուքեր ա։

Ըդ հարուստ մարթն ա գիգա կիչկե օր, ուր բերան բաց կմնա, կեսա. «Աչաբ էս աշխարհ էսպես լավ շինութեն էղե՞ր ա»։

Կխանչա, սեյիս կառի իգա, կեսա.

— Սեյիս, կուրբան էլնիմ քու դլխուն ու արևուն, դու էսպես լավութեն լէ էրեցիր ընձի, էլ բան հարկավոր չէ ընձի, ուղա ընձնեն, ասա՛, ի՞նչ կուղիս, ես իտամ։

Կեսա.— Հարուստ մարթ, էրթամ իմ տեխ նստիմ հար իրկուն, իրկուն դիգամ ուղիմ։

Էդի ա, կէրթա ուր ծիու մոտ կնստի, կեսա.— Աստծու անասո՛ւն, իմ աղեն դրեր ա իմ վրեն, կեսա.— «Արի ուղի, ի՞նչ ուզիմ»։

Ծին գելնի դրուցք, կեսա.— Կէրթաս էնտեխ, կուղիս, ասա. «էն մըռդալ ծին տուր ընձի, ես խեծիմ էրթամ իմ էրկիր»։

Էտա գելի գիգա հարուստ մարթու մոտ։ Հարուստ մարթն ա կեսա.

— Այ տղա՛, էկա՞ր, հ՚ուզա, ինչ կուզիս՝ իտամ քըզի։

Կեսա.— Աղա, ես օր կուզիմ քըզնից, էն մըռդալ ծին ա, օր գու տաս, ես խեծիմ էրթամ իմ էրկիր, մեկ լէ էն պառավ իտաս ընձի։

Հարուստ մարթն ա կեսա.— Տղա՛, մալ ուղա, փարա ուղա տամ քըզի, էդոնք օր կուզիս՝ ես հմա մուֆթա գիտամ քըզի։

Տղեն ա կեսա.— Ես ուրիշ բան չըմ հ՚ուզի քըզնե, ֆաքաթ էղ ծին ու պառավ իտաս ընձի։

Կեսա.— Տղա՛, քու մեխք քու վիզ, էլ, առ պառավ լէ՛, ծին լէ՛ քըզի, առ տար։

Ըդ տղեն ա, դելի ըդ աղից խաթր կառի, ծեռ կպաքա ու կէրթա։ Գիգա կանուշնից ուր ծին կքաշա դուրս ու կխեծի, կառի ըդ պառավ ու դեղեն կելի։

Քաղքից օր էլավ, պառվու ծամեր կապեց ծիու պոչ։ Ըդ ծին էր, Արաբստանի ծին էր, առավ զէդ պառավ ու ընկավ ըդ քարերու

մեջ, զէն տեսավ օր ծին զպառավ զարկեց էն քար, զարկեց էտ քար, պառավ ճարգեց, թողեց պառվու մաղեր մեկի մնաց ծիու պոչի վրեն։

Ըդ տղեն էր ուր ծին քշեց, գիզա օր թը իդա ուր էրկիր, ուր վեց ախպրտոց մոտ։ Գիգա ճամխու մեճ խարաբա ճաղացի մե ռաստ գիգա, կենա օր թը ըդ ճաղաց հընցի, մարթ մի գելի դուրս, կխանչա, կեսա.

Այ տղա՛, դու դեոր կէրթաս,— կեսա,— ախըր իդա լէ տոմ ա, շենլրք ա, արի խաց մը կի ու խեծի գնա։

Ըդ տղեն ա կեսա.— Այ մարթ, ես զիցա խարաբա ճաղաց էր, ես ի՞նչ գինե օր շենլրք էր, խաց կեր մեջ, մարթ կեր մեջ։

Ըդ տղան ա կիչի, էն մարթն ա կրերա էտ ծին կկապա, ճաղցի մեջ։ Բերեց խուրց մի առվուտ լցեց ծիու հ՝առեճ։ Էդ ճաղցպան ու տղեն գացին ճաղցի քոխ։ Տղեն ա կաչկի օր նա՛ խաց, նա՛ ճուր, նա՛ բան, բա՞ն չկա օր թը ուտա, մինակ ճաղցպան մե, տեսի օր պատեն սուֆրե մի կախուկ ա։

Ճաղցպան էր սուֆրին ըսեց. «Սուֆրա, իչի արի, մեք խաց ուտիք»։ Սուֆրեն էր իչավ էկավ ամեն եմեկ-թեմեկ լցավ վրեն, ինչ թավուր եմեկ ըսես թափավ վրեն։ Ուրանց ամեն լավ կերակուլ կուտին, կխմին։ Էդ ճաղցպնի ծեռ լէ չիպուխ մը կէղնի, կուշտ օր կուտին, կզարկա սուֆրի վրեն, կեսա. «Սուֆրա, դե էլի կախվի քու տեխ»։ Սուֆրեն էր էլավ կախավ ուր տեխ։

Տղեն էր ըսեց. «Խերախոլա ըդ սուֆրեն էղեր ընձիկ, ըդ սուֆրեն խընց իմ ծին աղեկ ա»։ Ճաղցպան լէ աչք թալա տղի ծին։

Ըդ տղեն ա գելի ուր ծին կքաշա դուրս օր խեծի։ Ճաղցպան ա տղին կեսա։

— Տղա՛, դու քու ծին, ես իմ սուֆրեն, պաղտվոցի խաղանք,— կեսա,— իրեք անգամ ես կպաղտվիմ, հարգե դու ընձի գտար, իմ սուֆրեն թ՝էղի քրզիկ, հարգե չգտար՝ ըղհաղ իրեք անգամ գու պաղտվտիս, հարգե ես քրզի գտա, քու ծին թ՝էղի ընձիկ։

Ըդ տղեն ա կեսա.— Թ՝էղի։

Տղեն ա, կխփու ուր աչքեր։ Ըդ ճաղցպան կէրթա կպաղվրտվի, ըդ ճաղցպան ա կէղի կորեկի խատ, կքաշվի ճաղցի բոգ, ըդ տղեն ա կօլորտի, չօլորտի չկերնա գտի, ի՞նչ դինա։

Ծին ա կղանչա, կեսա.— Տղա՛, արի ըստեխ,— կեսա,— գնա կանի էդտեխ, ասա՛. «Զամչնա՞ս, էղեր իս կորեկի մը խատ, ինգեր իս քարի տակ, օր էլա ճուր թողեցի, գելիս ալուր, էլի արի»։

Ճաղցպան գելի գիգա, կեսա.— Ըս անգամ ընձիկ գտար, մընաց էրկու անգամ։

Մեկ լէ ըգոր աչքեր կխփու, ճաղցպան կէրթա կպաղվտի. ըդ անգամին լէ գելի մուկ մի, կքաշվի շողտուն, ճրի մեջ։ Ըդ տղեն կօլորտի, չօլորտի, ի՞նչ կարա դտի։

Ծին ա կղանչա, կեսա.— Տղա՛, էստեխ արի,— կեսա,— գնա ասա, «Ճաղցպան, դու չամաչի՞ս, էղեր իս մուկ մի, մտեր էդ շողտուն, հմի էլիմ, ճուր թողիմ, քըզի կխեղթիմ հ'օդի»։

Ճաղցպան գելի գիգա, կեսա.— Տղա՛, էսա էլավ էրկու անդամ, մնաց մեկ։

Էդ տղեն ա կխփու, էն լէ կէրթա կպաղվտի կէղի իդհախսի մախաթ մի, կշուլուվվի պատն ու վի։ Էդի լէ կօլորտի, չօլորտի, չկարնա տեսի։

Ծին ա կղանչա, կեսա.— Տղա՛, ղիդա արի,— կեսա. —Գնա ասա. «Ճաղցպան, չամաչի՞ս, էղեր իս մախաթ մի, շուլուվվեր իս էդա պատն ու վի, մկա դորչիկ օր էկան, ուրանց ջըվըլներ իմա՞լ կկարին»։

Ճախցպան ա գելի իգա, կեսա.— Տղա՛, էսա իրեք անգամ դու ընձի գտար, իդհախս դու գնա պաղտվի, ես կէրթամ իմ աչքեր կխփիմ։

Էդ տղեն ա կեսա.— Շատ լավ կէղի։

Ըդ ճաղցպան ա կխփու, ըդ տղեն ա կէրթա կպաղվտի. տղեն ա, դեն ու դեն կզարկվի դեռ՞ պտի պաղվտի ըդ պզտիկ ճաղցի մեջ ուր քավըրկան (մեծ) ջանդկով։

Ծին ա կղանչա, կեսա.— Տղա, ըստեխ արի,— ղիգա, ծիու մոտ, ծին կէնա մազ մի, կքաշա ուր պոչ։

Ըդ ճաղցպան ա կօլորտի, չօլորտի ի՞նչ կարող է դտի, կեսա,— Տղա՛, էլի արի, ես չկանամ քըզի դտիմ։

Կեսա.— Քու տուն ավիրի, չե՞ս տեսնա՝ ես ծիու պոչ կիսատակիմ։

Կեսա.— Տղա՛, մնաց էրկու անգամ։

Ճաղցպան կխփու, էլի կէրթա կպաղվտի էդ տղեն։ Ըդ տղեն ա, դեն ու դեն կզարկվի, ամա ըդ քավըրկան ջանդակով դեռ՞ պտի պաղվտի։

Ըդ ծին ա կղանչա ըդ տղին, կեսա.— Տղա՛, էստեխ արի։

Ծին ա, զտղեն կէնա մազ մի, կքաշա ուր բժին (վզի մազեր, բաշ)։

Ճաղցպան ա, կօլորտի, թը չօլորտի, չկերնա գտնի։

Կեսա.— Տղա, էլի արի, չկերնամ քըզի գտիմ։ Մնաց մե անգամ օր սուֆրեն տանիս։

Տղեն կեսա.— Չտեսնի՞ս օր հանդե իմ ծիու բժին կսանդրիմ։

Ըդ ճաղցպան ա կխփու, տղեն կէրթա կպաղվտի, տղեն ա էլի դեն ու դեն կզարկվի, ըդ քավըրկան ջանդակ ո՞ւր պտի պաղվտի։

Ծին ա կղանչա տղին, կեսա.— Տղա, ջստեխ արի։

Ծին ա կենա մըխ մի, կքաշա ուր օտաց նալի մեջ։

Ճաղցպան ա էնդեն կօլորտի, էստեխ կօլորտի, դեռ՞ր պըտի գտնի զտղեն։

Ճաղցպան կեսա.— Տղա՛, էլի արի, ես չկանամ քըզի գտիմ, սուֆրեն հալալ էղի քըզի, առ ու գնա։

Տղեն կեսա.— Ճաղցպան, դու տեսնիս օր իմ ծիու մըխ թուլցեր ա, կղարկիմ օր էլնիմ, խեծնիմ։

Տղեն ա ուր ծին կքաշա դուրս, ու կխեծնի, սուֆրեն կառնա կգնա ուր հ'առեճ։

Ճաղցպան ա կեսա.— Տղա՛ իմ սուֆրեն տարար, իմ սուֆրին խունար,— կեսա,— դինա՞ս ինչ ա, ինչ չէ։

Կեսա.— Ի՞նչ գինամ, ճաղցպան ջան, ինչ ա, ինչ չէ։

Կեսա.— Իմ սուֆրեն կտանիս, ըս չիբուխ կառիս քու ծեռ, ինչ ժամանակ օր թը անոթցար, չիբուխ զար վըր սուֆրեն, ասա. «Սուֆրա՛, բացվի օր մեք խաց ուտիք, անոթցեր իք»։ Օր թը սուֆրեն օր բացվավ, օր թը էրկրներով իգան ուտին, չխլսին, ինչ զադար ուտին, գեվելնա,— կեսա,— օր թը կերաք, թրմեցիք, ըգա չիբուխ կզարկիս վրեն, կըսիս. «Սուֆրա, էլի կախվի». սուֆրեն օր թը կախվավ, ուրիշ մարթ օր թը իգա, ուր ծեռ իտա քու սուֆրեն, ընդրա ծեռ կկպի սուֆրեն, ասիմ, քենի մարթ օր գան պրծուն, զէդ մարթ կկպին իրար, իդրա խունար լէ էդ ա։

Տղեն ա խաթր կառնի ճաղցպնից ու կխեծի ուր ծին ու գիգա հայդե ուր էրկիր, ուր ախպրտաց մոտ։ Գիգա ճանապարի կանոթնա, կեսա. «Կանի տեսնանք, չիբուխ զարկիմ սուֆրի վրեն, տեսնանք, թը ըդ սուֆրի խունար ըղորթ ա». չիբուխ կղտրկա սուֆրի վրեն, կեսա՝ «Սուֆրա, պարզվի, մեք խաց ուտինք». սուֆրեն կպարզվի, սուֆրեն պարզվավ, էնպես լավ կերակուլներ լցվավ վրեն, տղեն ու ուր ծին կերան խմեցին ու կուշտ կերան։ Էլավ չիբուխ զարկեց սուֆրի վրեն՝ «Սուֆրա, էլի կախվի». ըդ տղեն ա էլավ խեծավ ուր ծին, էկավ ուր տուն։

Էկավ ուր տուն, աչքեց օր թը ախպոր կնկտիք էնպես կլավցած ու խորոտկցած ու կարմրած, էլած կտկչի պես, իդոդկուն ուր կնիկ ընպես էդեր ա, օր թը խեղճ, հմա ընպես խեղճ էղեր ա, օր թը ասղու ծկեն կէրթա։

Ախպեր կիշկա օր ուր կնիկ ու ախպոր կնկտիք անոթի ին, չիբուխ կզարկա վըր սուֆրին, կեսա. «Սուֆրա, արի բացվի իմ ախպոր կնկտիք ու իմ կնիկ խաց ուտին»։ Սուֆրեն ա գելնի գիգա կբացվի, լավ կերակուրներն ի վրեն կսուքվի։ Ըդրա ախպրկնկտիք ու կնիկ կնստին վրեն, ուրանց կուշտ կուտին։ Ըդ տղեն ա չիբուխ կզարկա վըր սուֆրին, կեսա. «Սուֆրա, էլի կախվի»։ Սուֆրեն գելի կախվի։

Ախպոր կնկտիքն ա իրարու կեսին թը՝ «Աստված նոր մըզի տվեց։ Իդհախսուն օր թը մեր դոստեր էկան, սուֆրեն կբերինք, կպարդինք կերուխում կէնինք, քեֆ կէնինք, էլ թոնդիր մոնգիր չվառինք, աստված էլ մըզի տվեց»։

Ըդ տղեն ա, գելի ուր կնիկ կխանա դուրս, կեսա.

— Կնի՛կ, կէրթաս թոնդրա շուրթ նստիս,— կեսա,— ինչ օր թը մեր տուն կէղի, չէղի, չէղի թը քու տեխեն էլիս խառվիս ուրանք. կնստիս թոնդրան շուրթ, տեղից չելիս հարի գիգամ։

Ըդ տղեն ա, դելի կխեծի ուր ծին, դինա օր թը ուր ախպրտիք որ սարն ին նեճիր կէնին։ Գիգա կխասի ուր ախպրտոց։ Կխասի ուր ախպրտոց. ըդ վեց ախպրտանց աչքեր օր թը կքիսի ուրանց պզտիկ ախպեր, կուրախնան ու կխասին ուրանց ախպոր էրեսներ կպաքին, կեսին. «Ախպեր, դու բարով, խերով վըր մեր էրեսին էկար,— ըսին,— ախպեր, ախըր ըն ժամանակ, ըս էղավ քսան տարի օր մենք կարքվեր ենք, էդման բաներ չտեսեր ենք, մեր կընվըտոց վրեն։ Դու ըն ժամանակ մեկ սահաթ գացիր տուն, էկար ասիր թը՝ ծեր կնկտիք ամեկ ուրան դոստ բռնած, ուրանց քեֆ ու լախըրդի կէնին, իմ կնիկ առեր ա ավել ու կավլա, չավլա՝ ծեր կնկտոց օտներաց ժխեր չիստկի, դոց իմ կնիկ էնպես խեղճ էղեր ա»։

Պզտիկ ախպեր կեսա.— Ախպեր, ներողութեն կէնիք, իմ խելք թռուցեր ի, ես լէ խոսքմ է ըսեցի, բան չկա, էն լէ դրեք ծեր օտաց տակ։

Ըդոնք ա պրծան, ուրախցան իրարու վրեն, գացին ուրանց նեճրութեն կէնին։

Դառնանք իդոնց կնկտոց վրեն ու սուֆրի։ Տեսնի օր թը իգոնց սիրողներ կլեցվին տուն, քեֆ ու լախըրդի ուրանց կէնին, էդ ճոչ ախպոր կնիկն ա կեսա.

— Տո՛, սև իգա ծըզի, օր ես չասիմ ծըզի, դու չֆահմի՞ք, ախըր մեր սիրողներ անոթի ին, ծարավ ին, բերեք հաց ուտինք, կեր ու

խում էնինք։ Հիմի էլ խո թոնդիր չվառինք, ասիք վառելիք չկա, բան չկա, աստված ախոր մըղիկ տվեր ա, էլեք սուֆրեն բերեք։

Ըդ ճոչ ախպոր կնիկն ա կթռի օր թը սուֆրեն բերա, կանի թը սուֆրեն առնի, ծեռներ կկպի սուֆրեն, կխանչա ուր սիրականին, կեսա.

— Արի ընձի պրծու։

Ըդ սիրական ա կէրթա օր թը պրծու, կկպի կնկա թև։

Ըդ սիրական ա կբոռա.— Մենք չկարնանք պրծուք, արիք մըզիկ պրծուցեք։

Միշնեկ ախպոր կին կէրթա օր թը սիրականին պրծու, էն լէ կկպի էն սիրական։ Որ հասիլ, ըդ վեց ախպոր կնկտիք ըդ վեց սիրական կկպին իրար, ամեն սիրական զուր սիրական կկպին։ Ըդ աղի կնիկ լէ նստի թունդրի շուրթ, ուրին թամաշա կէնա։ Չէն կաեսի օր թը տերտեր ու ժամկոչ էնտեխեն էկան տուն օր թը տուն օրշնա։ Տերտերոշնի կեսին. «Արի մըզի էստեխեն պրծու, ինչ խըդար ցորեն հ'ուզիս, ինչ խըդար օր փարա կուզիս, կիտանք քըզիկ»։

Կեսա.— Աստված ծեղի օրշնի, ես զինամ օր թը դուք պար ա կխաղաք, ըդ ի՞նչ էղեր ա ծըզի։

Կեսին.— Չէ՛, տերտեր, մեք կպիր ինք իրարու, արի մըզի պրծու։

Տերտերն ա, ծեռ կթալա օր թը սիրական պրծու, տերտեր լէ կկպի էն դոստ։

Տերտեր կեսա.— Ժամկոչ, գիտի, դու քու աստված, ես լէ կըպա, արի ընձի պրծու։

Կեսա.— Տեր հայր, ի՞նչ էղավ քըզի։

Ծեռ թալավ թը զտերտեր պրծու, էն լէ ջվալ թև կկպի տերտեր։

Չէն կտեսի օր մըրթըբներ կլցվին տուն, ուրանց գոլ կզարկին բան կժողվին։

Տերտեր կեսա.— Մրրթըբ, արի ընձի պրծու, ինչ խըդար ցորեն կուզես, քըզի իտամ։

Կեսա.— Հ'որի՞, տերտեր, ի՞նչ էղեր ա։

Ծեռ օր կթալա զժամկոչ պրծու, ինք լէ կկպի ժամկոչ։

Մոյդին կեսա.— Մոյդա, արի ընձի պրծու։

Մոյդան օր թը ծեռ կթալա զմըրթըբ պրծու, էն լէ կկպի մըրթըբ։ Որհասիլ, ըդոնք հ'ըմեն կռեզին իրարու իտև կվազին տան վերու դուց հարի գելին դուտ։

Չէ՞ որ ըդ մոյդի պառեկ լէ ցորեն կէղի, փըշու մը ցորեն էլ

կթափա ըդրա օտաց վրեն, խավ օր թը դա կտուց զարկա ըդրա օտաց վրեն ցորեն ուտա, ըդրա կտուց լէ կկպի մոյդի ոտ, էգ ճետ էնդեհեն էկավ օր թը զհավ թեթկա, ճետ լէ էլավ կպավ խավու պառեկ։

Իդոնք թըխ մնան օդի կպուկ, մենք դառնանք ախպրտոց վրեն։

Ըդ պզտի ախպերն էր, ըսեց.— Ախպրտիք, քելեք էսօր շուտ էրթանք տուն, էսօր մեր տուն բազրգան է էկե, քելեք շուտ էրթանք օր թը դընգիր դրինք։

Ախարտանքն ի կեսին. «Քելեք էրթանք, ըսօր նեճիր մի պակաս կբռնինք»։ Իտոնք ա դելին ու գիդան։ Գիգան տան կմոտիկնան։ Տան օր թը կմոտենան, պզտիկ ախպեր զինք փըշու մը ետ գիտա, ախպրտիքն ա գիգան կկանին դուռ, կաչքին օր թը դռներ բաց, օր թը տան վերին դեհեն ռեզվուկ ին հ՚իրար վրե՞ն հար էկեր է դուռ։

Գիգան կքոմվին վըր հ՚իրարու, պզտիկ ախպեր լէ դիգա կխասի, պզտիկ ախպոր կեսին.

— Ախպեր, էս ի՞նչ բազրգան ին։

Կեսա.— Ախպեր, ես ի՞նչ գինամ, ինչ բազրգան ա,— կեսա,— էնօր օր ես ձրզի ըսեցի ծեր կնկտիք էս փեշագի տերն ին, ամեկ ուրանց սիրոզմ է բռնած, ուրանց քեֆ կէնին, գու ընձիկ զարկեցիք, ջարդեցիք, էս էրկրեն լէ կաչխուն էրեցիք ընձիկ, էս էրկրեն մայրում հանեցիք ընձիկ։

Ըդ ախպրտիք կեսին.— Լա՜վ,— կեսին,— ըդ մարթիկ մեք կճանչնանք օր թը մեր կնկտոց սիրական ին, էս տերտեր, էս մըրթըբներ, էս խավ, էս ճետ հ՚որի՞ էկած ին, կպուկ ին օդի։

Պզտիկ ախպեր կեսա.— Ճետ, հ՚որի՞ էկեր իս կպեր օդի,— ծեռ կթալա ճետ կպրծու, ծեռ կթալա էդմլա խավ լէ կպրծու, մըրթըբ ու մոյդեն լէ կպրծու ու կեսա.— Ժամկոչ, դո՞ւ հ՚որի էկեր իս կպի տերտեր։

— Դո՛,— կեսա,— աստված ծեր տուն քամխա իշալլահ,— կեսա.— մեք էկաք օր թը ծեր տուն օրշնեք, ըդոնք ըսին՝ արիք մըզիկ պրծուցենք, ձրզի ցորեն գիտանք, ծեռ թալեցինք օր թը պրծուցենք, տերտեր կպավ ինե, տերտեր ըսեց. «Ժամկոչ արի ընձի պրծու». ես լէ ծեռ թալի օր պրծուցի, ես լէ կպա տերտեր։

Ծեռ կթալա զտերտեր ու ժամկոչ ու տերտեր կպրծու։

Բան մի փարա դիտան ըդ տերտրոշ, մըրթըրին ու ժամկոչին ու ինոնք կէրթան։ Կմնան ըդ վեց ախպոր կնկտիք ու վեց սիրական։

Իդոք կպուկ ին իրար։ Ախպրտիք դուռ կփակին ու գիգան մտին տուն։ Ախպրտանք կաչկին օր ամեկ կնիկ ուր սիրականի կուշտ կպուկ ա, ըդ պզտիկ ախպոր կնիկ նստուկ ա թոնրի շուրթ, նա՛ ծեն կէնա, նա՛ բան, նստուկ թամաշա կէնա։

Ըդ տղեկներն ին գելին, կառին թրեր, ու գընկին ուրանց կնկտոց ու սիրականներու վրեն, զէդ տասներկու ջան լէ կմորթի՞ն, մանր-մանր կփրթին, կտանին թավլի մեջտեխ, խոր մի կփորին, ըդ տասներկու շանի շանդակ լէ գըլնան ըդ խորու մեջ, խող գըլնան վրեն, բերան կսուքին ու գիգան ուրանց տուն կնստին։

Ըդ պզտիկ ախպերն ա, չիբուխ կզարկա վըր սուֆրին, կեսա.—

—Սուֆրա, արի բացվի ես ու իմ ախպըրտիք անոթցեր ինք, խաց ուտինք։ Իգոդքն ա սուփրեն կբացվի, լավ կերակուլներ կլցվին վըրեն, կուտին, կխմին։ Չիբուխ կզարկա վըր սուֆրին, գելի կկախվի։

Ըդ տղեն ա, սաբախտան օր թը էլտվ ինգավ քաղքի մեջ, ինչ տեխ օր խալալ կաթ ախչիկ օր կար, վեց խատ ճոկեց բերեց։ Բերեց ուր ախպրտոց վրեն, ամեկ ախպոր մեկ ախչիկ փսակեց։ Ցոթ ծեռք դհոլ քուսան բերեց։

Ցոթ գիշեր, յոթ ցերեկ խաղցան, ուրախցան, կերան խման ըդ սուֆրից, քեֆ էրին. ուրանք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնիք ծեր մուրազին։

Աստծուց իրեք խնձոր իջավ, մեկ ըսողին, մեկ տեսողին, մեկ լէ անգանջ էրողին։